

դեր խաղացած էին եւ երբեք՝ առաջնակարգ, գոհ էին իրենց հողերով, եւ անձնատուր անոնց բարգաւաճման: Այս պատճառաւ Բագրատունեաց ուղղակի թշնամական հակառակութեան չէին բախած, այլ առ առաւելն իրր Մամիկոնեանց մտերիմ տոհմ՝ կասկած ու զգուշութիւն կը ներշնչէին: Բայց ահա յանկարծ փոփոխութիւն տեղի կ'ունենայ Կամսարականաց դիրքին մէջ, եւ այն՝ ընդդէմ Բագրատունեաց: Աշոտ կ'անտեսուի եւ Ներսէս կ'ընտրուի: Ասով Կամսարականք կը դառնային առարկայ նախանձի եւ զոհ բագրատունեան տոհմաջինջ իշխանատենչ քաղաքականութեան: Սմբատ Բագրատունի՝ Ներսէսի յաջորդն արդէն ձեռք կ'առնու Մամիկոնեաններն ու Կամսարականները տկարացնելու ծրագիրը (Laurent, 204): Անկարելի է այդ ծրագրին իրագործումը քայլ առ քայլ հետապնդել: Սմբատ հիմ կը դնէր քաղաքականութեան մը, որ հօրենական հողային ժառանգութեան հետ միասին կը փոխանցուէր յորդուց յորդի, եւ մեզի ծանօթ է՝ յամառ խուլ կռուին միայն վերջնական արդիւնքը: Ը. դարու վերջը Կամսարականք Հայաստանէ կը ստիպուին հեռանալ:

Հ. Ս. ԿՈՒՅԱՆ



**ԱՆՅԱՅՏ ԱՂԱՆԳԱԻՈՐՆԵՐ ՀԱՅՈՑ ՄԷՋ**

**ԺԶ. ՈՒ ԺԷ. ԳԱՐԵՐՈՒՄ**

**Ա.**

Հայ հանրային հոսանքների ու աշխարհայեացքների պատմութեան համար մեծ նշանակութիւն ունի աղանդների ուսումնասիրութիւնը:

Միջին դարերում ինչպէս ամէն տեղ, այնպէս եւ Հայաստանում եկեղեցին լինելով տիրող դասակարգի կազմակերպութիւններից մէկը՝ ենթարկուում էր այն բոլոր գաղափարական յարձակումներին, որոնք ուղղուում էին իշխող կարգերի դէմ: Աւրիշ երկիրների նման մեր աշխարհում էլ այս բողոքներն ստանում էին կրօնա-

կան-աղանդաւորական կերպարանք: Հանրային ընդդիմադիր հոսանքը Հայաստանում ու Հայ միջավայրում էլ հրապարակ էր գալիս հերձուածի դրօշով: Միջնադարեան ամբողջ հազարամեակի ընթացքում այս հանրային ընդդիմադիր կուսակցութիւնը իւր աջակողմեան ու ձախակողմեան թեւերով փութորկել է Հայ իրականութիւնը բոլբոլիտոն, մծղնէ, պողկեան, թոնդրակեցի, արեւորդի ու այլ անուններով՝ մերթ արտայայտուելով իբրեւ յարատեւ ու լայն դանդուածային հոսանք եւ երբեմն էլ առկայծելով իբրեւ անձուկ ու վաղանցուկ, բայց այնուամենայնիւ նշանակալից միջադէպ:

Մի ժամանակ մեղանում հեղինակները Հայ աղանդների մասին խօսելիս իրենց ասելիքը վերջացնում էին Լաստիվերացու, Նարեկացու, Մագիստրոսի դարաշրջանի թոնդրակեցիներով, որոնք այսպիսով ներկայանում էին Հայ աղանդաւորական շարժման վերջին օղակ: Քչերն էին յիշում այնպիսի մի երեւոյթի մասին, որպիսին էր Գաւիթ Ծարեցու կամ, աւելի ճիշտը, Գառնեցու ելոյթը Հայոց ՈՂԹ (== 1250) թուականին: Տիրող կարծիքն ընդհանրապէս այն էր, որ միջնադարի աւարտի հետ աղանդաւորական հուրն էլ մարում է Հայ ժողովրդի ծոցում:

Այս գրութիւնը տեւում է մինչեւ 1880 թուականը, երբ հետախոյզ Ալեքսանդր Երիցեանը յայտնագործում է<sup>1</sup>, թէ նոր դարի հարիւրամեակներում, յատկապէս ԺԸ. ու ԺԹ. դարերում գոյութիւն է ունեցել մի աղանդաւորական շարժում: որ Տաճկահայաստանից անցել է Ռուսահայաստան, բաւական ժամանակ յարատեւել է Շիրակում՝ վերջ ի վերջոյ յարելով ու ձուլուելով բողոքականութեան հետ: Գրականութեան մէջ այս հերձուածը յայտնի է «նոր թոնդրակեցիք» անունով, որոնց պատմութեան ամենահին թուականը 1782ն է, երբ գրուել է այս աղանդի դաւանանքը պարունակող աշխատութիւնը, որ կրում է «Բանալի ճշմարտութեան» անունը:

Երիցեանի յայտնագործութիւնը, որ Հայ աղանդների պատմութիւնը հարստացնում էր նոր օղակով, ուսումնասիրողների առաջ դնում էր մի կարեւոր հարցմունք, որին պէտք էր պատասխանել: Եթէ Հայ աղանդաւորական շարժումը, որ կարծում էին, թէ դադարել է թոնդրակեցիների՝ պատմաբեմից չքանալով կամ առառաւելն Գաւիթ Ծարեցու միջադէպով, կրկին

<sup>1</sup> «Փորձ», Հանդէս, Թիֆլիս 1880:

մխում եւ վառուում է ժ.Ը. ու ժ.Թ. դարերում, ապա անհնարին է, որ նոյն շարժումը լինվին դարած կամ չքացած լինի միջին ժամանակաշրջանում, այն է 1250 թուից մինչեւ 1782ը: Անհնարին է, որ չլինէին միջնորդողակներ ժ.Գ., ժ.Ե., ժ.Զ. ու ժ.Է. դարերում էլ:

Որքան էլ a priori ընդունելի լինէր հայ աղանդաւորների գոյութիւնը յիշեալ դարերում, այնուամենայնիւ 1880 թուականից մինչեւ օրս, վերջին 50 ամեակի ընթացքում չեն առաջադրուել թանձրացեալ տուեալներ, որոնք ապացուցէին, թէ Դաւիթ Ծարեցուց մինչեւ Յովհաննէս Աւսագանունին — նոր թոնդրակեցուց նշանաւոր ներկայացուցիչը — ճիշտ որ եղել են աղանդներ ու աղանդապետներ: Յօդուածիս նպատակն է մատնանշել ու ընդգծել մի քանի հատուածներ, որոնք վկայում են, թէ գոնէ ժ.Զ. ու ժ.Է. դարերի մասին կարող ենք ասել, որ այն ժամանակ մեզանում գոյութիւն են ունեցել աղանդաւորական շարժումներ:

Բ.

Այս հարիւրամեակներում մի աղանդաւորական շարժում բռնկում է բուն Հայաստանում, իսկ միւսը՝ հայ գաղութներից մեկում:

Բուն երկրում հերձուածողական շարժում սկսողը մի խորհրդաւոր անձնաւորութիւն է, որի մասին պատմում են Զաքարիա սարկաւազն ու Գրիգոր Արքայապետ Գարանաղին:

Ի՞նչ էր նրա իսկական անունը, յայտնի չէ: Զաքարիան նրան կոչում է Մեխլու քարա կամ Մեխլու վարդապետ, իսկ Գարանաղին՝ սոսկ Մխելոյ:

Սրա կեանքի առաջին շրջանի մասին տեղեկութիւններ տալիս է գլխաւորապէս Զաքարիան: Վերջինիս ասելով՝ Մեխլուն «էր այր մի Աղուան, որ այժմ ասեն Ուտի, ի Գանձակ քաղաքէն Աղուանից»: Վանական կրթութիւնն ստանում է Աղուանից Յովհաննէս Ը. կաթողիկոսի օրով Գանձասարում, որտեղ նրան տալիս են աւագ սարկաւագութեան աստիճան: Մեխլուն ճարտար ու լեզուանի մարդ է լինում: Վանքի պիտոյքների համարն րան ուղարկում են գաւառ, թերեւս պտղի եւ այլն հաւաքելու, բայց սա՛ օգտուելով առթից՝ քարոզութեան է սկսում:

«Իսկ նա գնացեալ ձեւացոյց զինքն վար-

դապետ եւ քարոզէր թիւր եւ անուղիղ հայհոյանս եւ չարաբանութիւնս<sup>1</sup>»:

Գանձասարում լուծւում են գաւառում սկսուած շիթի մասին: Կաթողիկոսը յետ է բերել տալիս քարոզիչ սարկաւագին, կարգաւորած անում եւ պատուիրում է վանքում մնալ, իբրեւ «ճառայ միաբանից», «որպէս անուսումն մուղտեսի»: Սակայն միջադէպը սրանով չէ վերջանում: Գործը հասնում է Գանձակի-իշխան Գաւութ-Խանին, որը բռնում է Մեխլուի կողմը: Բերել է տալիս կաթողիկոսին, տուգանում եւ հարկագրում, որ Մեխլուն նորից կարգաւոր ձեռնադրէ եւ քարոզելու արտօնութիւն տայ: Կաթողիկոսը երկիւղեց կատարում է Խանի պահանջը, եւ Մեխլուն այնուհետեւ սկսում է բացայայտ քարոզութիւնը:

Իսկ Գարանաղին Մխելոյի կեանքի առաջին շրջանի մասին պատմում է համառօտակի:

«Եւ էր այս Մխելոյս յերկրէն յԱրեւելից եւ եկեալ ի Սահամի-իւսին յԱրարատին եւ յայլ շրջակայ գաւառս նոցա եւ վարդապետական անուամբ շրջելով յամենայն արեւելայսն կոյս մինչեւ ի Պարսկաստան...<sup>2</sup>»:

Ի՞նչ էր քարոզում Մեխլուն:

Նրա քարոզն, ինչպէս պատմում են Զաքարիան ու Գարանաղին, որոնք կարող էին նրան վարկաբեկելու նպատակով նոյն իսկ ունեցնել նրա ասածները, շատ չափաւոր բնոյթ ունի: Նա չէ քննադատում եկեղեցու աշխարհայացքի հիմնական կէտերը, դաւանանքը, վարդապետութիւնը, խորհուրդները: Մարդեղութիւնը ժխտողներից չէ եւ ոչ էլ խաչամարտ է: Մեխլուն դժգոհ է եկեղեցական նուիրապետութիւնից, դէմ է միմիայն կուսակրօնութեան կամ, ինչպէս ասում են, «սեւ հոգեւորականութեան», որը նրա ասելով պղծակրօնութիւն է լոյ:

«Եւ ելեալ քարոզէր զարտուզի: Եւ եղել թշնամի արեղայից եւ ուր տեսանէր արեղայ, մերկացուցանէր եւ բրածնծ առնէր: Եւ ասէր ցժողովուրդն. ով որ արեղայի տայ ինչ, ինքն ի դժոխքն իջանէ: Քանզի ոչ է արժանի արեղայն առնել պատարագ, վասն զի շնացողք են եւ պիղծ: Այլ երկուն արժան է առնել պատարագ, զի սուրբ ամուսնաւ կայ...<sup>3</sup>»:

<sup>1</sup> Զաքարիայ սարկաւազի «պատմագրութիւն», հատոր Ա, Ազդարչապատ 1870, էջ 47:

<sup>2</sup> Գրիգոր վարդապետի կամախեցոյ կամ Գարանաղեցոյ «Ժամանակագրութիւն», հրատ. Մեքարոյ վարդապետ Նշանեան, Երուսաղէմ 1915, էջ 456:

<sup>3</sup> Զաքարիա, նոյն հատոր, էջ 48—49:

Ջաքարիայի ասելով՝ Մեխլուն այնքան է առաջ գնում արեղաճաշածութեան մէջ, որ սկսում է սեւագլուխների ջարդ քարողել: Քանաքեռի եկեղեցում տուած քարողի ժամանակ, — ասում է Ջաքարիան.

«Ղօղանջէր դէպ յարեղայսն եւ ասէր. ով որ որ սպանանէ արեղայ մի, այլ ոչ գոյ հարցումն մեղաց նորա, այլ երթայ յարքայութիւնն Աստուծոյ<sup>1</sup>»:

Ջաքարիան Մեխլուին ժամանակակից չէ, բայց մօտ է ժամանակով: Աղանդաւորի քարողչուածութեան տարիներում պատմագիրը կամ ծնուած չէր եւ կամ շատ փոքր էր<sup>2</sup>, եւ վերջինս տեսել է առաջնի ժամանակակիցներին միայն՝ սրանց պատմածներից քաղելով իւր տեղեկութիւնները նրա մասին: Գարանաղցին, ընդհակառակը, ժամանակակից է, բայց բուն երկրից հեռու գտնուելով Մեխլուի մասին նոյնպէս «ի լըոյ» է պատմում: Սակայն եւ այնպէս թէ Ջաքարիայի ու թէ Գարանաղցու ասածներն իրար բռնում են եւ հաստատում, որ նրանց պատմածի կորիզը ճիշտ է եւ ոչ թէ յերիւրած:

Գարանաղցին էլ է գրում, որ Մեխլուի քարողը բացառապէս ու առհասարակ կուսակրօն հօգեւորականութեան դէմ էր:

«Ոչ երիցոյ եւ ոչ աշխարհականաց հակառակութիւն չունէր, այլ միայն ի հետ սեւագլուխոց: Հետ լաւացն եւ վատացն միապէս մարտնչէր եւ մաքառէր<sup>3</sup>»:

Ըստ Ջաքարիայի՝ երբ Մեխլուն իւր հետեւորդներով Աղուանից աշխարհից դալիս էր Գեղամայ գաւառը, «կապեալ ունէր հինգ արեղայ<sup>4</sup>»: Իսկ ըստ Գարանաղցու՝ նա արեղաճաշածութեան ու արեղաջարդի հրաման էր ձեռք բերել պարսից շահից ու խաներից:

«... Ի վերայ արեւելից սեւագլուխացն հրովարտակ հանելով ի Շահէն եւ այլ խաներացն, ուր եւ գտանիցէ թէ արեղայ անուն, թէ եպիսկոպոս անուն եւ թէ վարդապետ անուն, սպանանիցէ եւ զբազումս հալածեսցէ յաշխարհէն Հայոց, որպէս եւ արար բազմաց<sup>5</sup>»:

1 Ջաքարիան, նոյն հատոր, էջ 52:  
 2 Ջաքարիան Յովհաննավանքի կոնդակը գրել է հայոց ՌՃԱԶ (= 1,687) թուականին 60 տարեկան հասակում, ուրեմն ծնուել է մօտաւորապէս 1627ին: Հմմտ. Ջաքարիա, Գ. հատոր, Աղաղաղապատ 1870, էջ 2:  
 3 Գարանաղցի, էջ 457:  
 4 Ջաքարիա, Ա. հատոր, էջ 49:  
 5 Գարանաղցի, էջ 470:

Բացի այսպէս ընդհանուր բառերով գրելուց, թէ «զարեանց հեղմունս գործէր<sup>1</sup>», Գարանաղցին պատմում է մի յատուկ դէպքի մասին էլ: Մեխլուն հետապնդում է մէկ եպիսկոպոսի ու մի արեղայի՝ սպանելու նպատակով, իսկ սրանք փախչելով մի պառաւի տուն՝ թագնում են ցորենի փեթակի մէջ՝ «թաղեալ ի ցորեանն»: Հալածիչը կասկածելով, թէ ցորենի մէջ մարդկայ, նիզակով հարուածում է «ի մէջ ցորենոյն»: «Չգիտացաք, — աւելացնում է Գարանաղցին, մեռանիլն եւ զկեալ նոցա<sup>2</sup>»:

Իսկ Ջաքարիան գրում է, թէ նրա քարողից ազդուած՝ ոմանք փորձում էին արեղայ սպանել, որ արքայութիւն գնան: Այսպիսի մէկն է Քանաքեռցի Թուածակենց Յակօբը, որը երբ գնում է Մեխլուի մօտ իւր մեղքերը խոստովանելու եւ ապաշխարութիւն խնդրելու, արեղաճաշածից պատուէր է ստանում:

«Ե՛րթ, սպան արեղայ մի եւ բեր ի մոյն եւ յարենէն, զի կերայց զմիսն եւ արբից զարիւնն եւ արարից պատարագ եւ զբառանամեայ մեռեալն յարուցից, յայնժամ լիցի թողութիւն մեղաց քոց»:

Շարունակութիւնն այնքան հովուերգական է եւ այնքան գունեղ է պատմած, որ աւելորդ չենք համարում ամբողջութեամբ մէջ բերել:

«Եւ հաւատացեալ յիմարն այն եւ ի նոյն գիշերին գնացեալ ի դուռն վանիցն եւ սպասէր, զի թերեւս ելցէ Միքայէլ արեղայն... զի նա էր փոքր, քան զայլն: Եւ տեսանէ, զի ահա եկն Փիլիպպոս եպիսկոպոսն: Եւ այլն Յակօբը յարեալ ի վերայ նորա, եւ կարկառեաց զնաճախն ի վերայ գլխոյ եպիսկոպոսին: Եւ ասէ եպիսկոպոսն.

Գժուեցար, Յակօբ:  
 Եւ ասէ Յակօբն.  
 — Մեղայ քեզ, Տէր Փիլիպպոս. զի ես կարծեցի, եթէ Միրանն ես: (Ձի առաջին անուն Միքայէլին Միրան էր):  
 Եւ պատմեաց նմա Յակօբն զամենայն:  
 Իսկ եպիսկոպոսն խրատեաց զնա եւ ասէ.  
 — Նա ոչ պատարագող է եւ ոչ մեռեալ յարուցանող, այլ այս է, զի զքեզ մարդասպանս առնէ եւ արեան տէր:  
 Եւ գնաց, էլ Յակօբն ո՛հ եւ աւաղ կարգալով ինքեան<sup>3</sup>»:

1 Գարանաղցի, էջ 471:  
 2 Գարանաղցի, էջ 472:  
 3 Ջաքարիա, Ա. հատոր, էջ 52-53:

Անշուշտ Մեխլուի արիւնարբութեան մասին պատմածներէ մէջ չափազանցութիւններ կան: Սակայն մի բան անկասկած է: Յանձին Մեխլուի հայ աղանդաւորական շարժումը հանդէս էր բերում մի պարագլուխ, որ չէր դաւանում «մի հակառակ կալ չարին», կրօնական սկզբունքն, այլ կռուի տենչով համակուած՝ պատրաստ էր մաքառելու հատու միջոցներով, քննադատելու նաեւ հրով ու սրով:

Երևան: ԹԱԴՆՈՍ ԱՊՊԱԼԱԲԵՅԱՆ  
(Շարունակելի:)



**Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն**

ՎԵՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՅԻՄ

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱԹՐՈՒՄԱԿԻ

ԱՌ ԱՍՏՈՒԱՆՍՊԱՍՏԻ ՏԷՐ

**Հ. ԱՐՍԷՆ ՎԱՐԳԱՊԵՏ ԱՅՏԸՆԵԱՆ**

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՂԱՄԻՆԱՅ

ԵՒ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏ ԱՐԲԱՅՄԻԹԱՐԵԱՆՑ ՎԻՆՆԱՅ

Հ. Ղեւոնդ Ա. Ալիշանի Հայքոստին յայն գրուածոց կարգէն է՝ որ շատ քան զիւրութեամբ եւ համարձակութեամբ կը յօրինուին եւ ի հրապարակ կը հանուին քան թէ կը քննադատուին, ստելով զբան գաղղիացի թատերգակին՝ որ կ'ըսէ, թէ Անաշխատ է խըճբիճ, եւ դրժուարին է արուեստ<sup>1</sup>:

Մեթոդ եւ կարգաբանութիւն՝ ոչ ինչ. հրմտութիւն՝ ոչ ինչ. սրամտութիւն եւ քննադատական ոգի՝ ոչ ինչ. փոյթ եւ խնամ ստուգադրութեան եւ ուսումնական ճշդութեան՝ ոչ ինչ. այլ անբաւ խառնակութիւն հայ, յոյն, լատին, գաղղիերէն, արաբիկ, պարսիկ եւ թուրք բառերու, որ ընդ միմեանս կը կռուին, — վկայութիւնք ի տպագրեալ մատենից՝ լի անհաստարմութեամբք եւ անճշդութեամբք, իսկ ի Չեռագրաց՝ թերատ եւ կրճատ, եւ այն՝ յետին խամութեամբ եւ անհոգու-

թեամբ, — ծանրատաղտուկ կրկնութիւնք մի եւ նոյն հայերէն կամ օտարալեզու բուսոյ անուան, որ եւ յաճախ խեղաթիւրեալ ձեւերով կը յեղծեղուին իբր զանազան բոյսք, — տղայական ստուգաբանութիւնք, — ցուրտ եւ անհամ բանաստեղծութիւն, — ցրտագոյն եւ անհամագոյն հագեւորութիւն: Աւասիկ Հայկական Բոսաբարո-Յիւն, զոր լաւ եւս էր կոչել Հայկական Խառնաբարո-Յիւն, ուր անդամազիտութեան, բժշկութեան, գեղագործութեան, կենդանաբանութեան, հանաբանութեան եւ խոհակերութեան բառեր՝ որպէս բուսոց անուանք կը ներկայացուին եւ կը նկարագրուին՝ հանդերձ իւրեանց կարծեցեալ հոմանիշներովն յայլեւայլ բարբառս, թող զայնպիսիս որ հայ լեզուի մէջ անէ անգոյ եւ ամենեւին: Ի հաստատութենէ Մխիթարեան Տպարանին՝ Մխիթարեանի անուամբ այսպիսի տխմարական եւ տգիտական դիրք գեռ եւս հրատարակեալ չէր: Խիստ է բաձս, զիտեմ, բայց ոչ անիրաւ, ինչպէս ամենայն ճշմարտասէր մարդ կարող է ինքնին վկայել՝ եթէ իբրեւ զիս աշխատութիւն յանձն առնու մանր քննելոյ զՀայքոստին:

Երբ յամին 1895 հաղիւ երեքամեայ ժամանակի մէջ (27 Մայիս — 16 Աւգոստոս) գրեցի զիմ քննադատութիւն եւ յղեցի նոյն տարւոյ Սեպտեմբերի առաջին օրը առ մեծարգոյ օտացոյն՝ Տ. Գուրտոն Լուսինեան. համոզումս այն չէր որ զբոլոր վերիպակս եւ այլանդակութիւնս Հայքոստին հաւաքած եւ յանդիմանած էի. հարիւրաւոր քննելի՛ է «արագելի՛» արտաքոյ մնացին իմ քննադատութիւն: Թէպէտ եւ ներքին ձայն մի կ'աղղէր ինձ թէ ամենայն հաւանականութեամբ սխալած էր եւ յայնտեղի «բազմահմուտ» հեղինակն «հմտալից եւ ճոխ պարունակութեամբ ընտիր երկրիս<sup>1</sup>, սակայն ես սովորեալ գոյով հռչակել իբր ճշմարիտ զայն միայն՝ յոր վստահ եմ կամ գրեթէ վստահ, թողի ի միակողմն զհարիւրաւոր երկբայականն, եւ շատացայ ինչ ինչ Յաւելիս հարորդելով առ ազնուական ստացոյն ի 14 Մարտի 1896. յուսալից էի որ Հ. Ալիշանի զլիւսւոր առաջնորդն — Լեկէրի գաղղիական թարգմանութիւնն Իպն էլ-Պէյթաւրայ — վաղ կամ անագան պիտի լուծէր զիմ տարակուսանաց մեծագոյն մասնն (զէթ արաբականին նկատմամբ):

Յետ երկար թղթագնացութեան եւ խուզարկութեան, — զի սպառեալ կ'ըսուէր մատեանն,

<sup>1</sup> Չակերտներով նշանակեալ բառերն են յայնմ ծանուցմանէ Հայքոստին զոր գրած է Ալեկուկայ Մխիթարեան օրն եւ Արեւելեան Մատենադարանի հրատարակած էր 1895 տարւոյ ութ ամսաթիւերէն ծածկութիւն վերայ, Ապրիլ 1 եւ 15, Մայիս 1 եւ 15, Յունիս 1 եւ 15, Յուլիս 1 եւ 15: Չեմ զարմանար որ «հմտալից եւ ճոխ պարունակութեամբ ընտիր երկրիս» անուանակարգ թիկունք եղած ըլլայ Հ. Միւսեան Երեմեանի, ինչպէս կ'ըսէ նա ի ծանուցման իւր երկասիրութեանն Բոսաբարո-Յիւն. եւ Հայ Գործնական Գիտութեանց. «Գիտական բառերու մասին անուանակարգ թիկունք եղած է այս գործին Ա. Հ. Քալանձեւոյ Հայքոստին ընդարձակ ընտիր բառագիրքն. իսկ ըստաց մասին Ա. Հ. Ալիշանի Հայքոստին: Ծանուցումս եհաս առ ի Ս. Ղազարու վանաց ի Մարտ ամեան տարւոյս (1898):

<sup>1</sup> «La critique est aisée, et l'art est difficile», Destouches.